Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5

ՄԱՌԱՅԻՍԻ ՄԻ ԵՐԳ

Ա93
26

ԵՐՔՍԻՄ

ՄՈՌԱՑԻԱԾ ՄԻ ԵՐԳ

(ՊՕԷՄԱ)

Հրատարակություն «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԼՐԱԳՐԻ

1918

Տպարան «ԼՈՅՍ» Բեհրութեան փող. № 12
Երևան

26-Ա 9-Հ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Լույս ենք ընծայում առանձին բրոշիւրով պ. Արքսիմի պոէման, որ մաս-մաս տպագրուեց «Ժողովուրդի» մէջ, յոյս ունենալով, որ սրանով ոչ միայն գեղաբուեստական բաւականութիւն կպատճառենք ընթերցողներին, այլ և մի նոր առիթ կընծայենք նրանց՝ խորհրդածելու մեր ժողովրդի ներկայ վիճակի մասին։

«Ժողովուրդ»ի խմբագրութիւն

ՆԻՔԻՐ — Քոյր Զողակաթ Թառայեանին

Մի թէ նորաբաց ծաղիկն աննման
Կատի գարունն ու բուրմունքը գար-
նան,
Քո սիրան է մենակ, Քոյր իմ նորա-
բաց,
Որ ատում է երգն ու գարունն ան-
լաց։

Սիրոյ սրտաբուղխ մրմունջն աննման
Դու միշտ կտել ես դատարկ ու ու-
նայն,—
Արցունք ես փնտռել նրանց խորքե-
րում,
Անարցունք, անցաւ դու երդ չես սի-
րում....

Թող, ուրեմն՝ իմ այս նուէրքս հարուտ
Օրօրէ հոգիդ արցունքի կարօտ,
Գուցէ թէ դանես դու այնտեղ մի էջ,
Որ որոնել ես միշտ երգերի մէջ։—

Էջն տեսլութեան, ցաւի, անէծքի,
Էջն հալածանքի, յաւերժ յանցանքի,
Էջն՝ ինչպէս թէ հայ ազգիկը սիրուն
Անթախիծ, անլաց երգեր չէ սիրում..

Եւ թէ երգս՝ ուշիմ աչքերիդ թախծում
Բորբոքի ցաւի մի նոր առկայծում,
Դրանով, Քոյր իմ, պիտի իմանամ,
Թէ երգըս ապրեց դարեր, յաւիտեան։

ՄՈՌԱՑԻԱԾ ՄԻ ԵՐԳ

Առաջին երգ

Ա.

Այն գժբախտ երկրում, ուր մինչև հիմայ
Աւերակների ու մոխրի վրայ,
Ինչպէս կործանուած գերեզմանոցում
Մի ժողովուրդ է թշուառ հեծեծում.
Որտեղ ծագում է արևը պայծառ
Լոկ սև-սև խոցեր ցոյց տալու համար
Եւ, տեսած վշտից, ցաւից զարհուրած,
Պահւում լեռների յետևում կամաց.
Որտեղ կեանքը՝ սև մահից յետ խլուած,
Իբրև մի պատիժ է տուել Աստուած,
Ու մարդիկ իրենց մահը սեփական
Դեռ չը դաղարած սրտերով զգան.—

Շատ հին ժամանակ այդ դժբախտ երկրում
Զորս եղբայր էին միասին ապրում,
Զորսն էլ մի հօրմէ հալալ զաւակներ,
Բայց անմիաբան, անհաշտ ու անէջ։
Ասուած անխնայ տուել էր նրանց
Եւ՝ հարստութիւն, և՝ երկիր, և՝ գանձ,
Եւ մինչև անգամ դրախտն հաստատել
Նրանց երկրում էր արժանի գտել։
Այսպէս՝ ունէին բախտաւորութեան
Նրանք հասնելու ամեն մի պայման,
Բայց՝ բաբախում էր սրտերում նրանց
Եղբօր սիրոյ տեղ թշնամու նախանձ։

Բ.

Ո՞ր սիրտն է կեանքում անհոգս բաբախել,
Մի ցաւ չի ծեծել նրան, ջախջախել.
Բայց միշտ հոգսի սևն այն սիրտն է ծնել,
Որ անհոգս մօրից անհոգս է ծնուել։
Դրախտի երկրում փառքի մէջ ծընուած
Անհոգս ու անփառ սրտերում նրանց
Անշող նախանձի սև օձն էր անքուն
Տրաւում հոգսերի թոյն հիւսել թաքուն։

Ամեն մի եղբօր սրտամաշ հոգսն էր
Միւսին ընկճուած անժպիտ տեսնել.
Եղբօր ցաւերի մէջ էին նրանք
Գտնում և՝ հանդիստ, և՝ մխիթարանք։
Եւ որովհետև միշտ այս աշխարհում
Կարիքն ու ցաւը մէկտեղ են ապրում,
Եղբօրը ժպտից զրկելու համար
Կարճ ու անհրաժեշտ մի ճանապարհ կար.—
Եղբօր դէմ անվերջ թակարդներ լարել
Ու ամբողջ երկրին մեն-մենակ տիրել,
Իսկ մինչ այդ ծածուկ, դեռ ևս անբաժան,
Տէր դառնալ հարուստ հօր ժառանգութեան։

Գ.

Ո՞ւմ չի շլացրել արծաթն ու ոսկին,
Աշխարհն ենթակայ նրանց սուրբ խօսքին,
Միշտ դաս է տուել, թէ փողի համար
Պէտք է մոռանալ և՝ սէր, և՝ եղբայր։
Այսպէս՝ ամեն մի եղբայր առանձին,
Նոանդով կապած իրանց սուրբ գործին,
Թալանում էին հօր գանձն անհամար
Ոսկին եղբօր տեղ սիրելու համար։

Թալանում էին նրանք գիշերով
Ու հեռանալիս լի-լի փեշերով,
Որպէսզի կասկած չը ծագի յանկարծ,
Դանձի դռները թողնում էին բաց.—
Եթէ պակասը, բան է, նկատուէր,
Ինչ որ նրանցից չպիտի դատուէր.—
Զար թշնամին է եկել բաց դռնով
Ու դանձը տարել անխիղճը բիռնով։
Բայց ով էր յիմար, որ հարց բարձ-
բացնէր
Ու միւսների միտքը արթնացնէր.
Թէև պակասը շատ էր աւելի,
Բան ինքը մենակ տարած կլինի,
Բայց նա կասկածել անգամ չէր կա-
րող,
Թէ եղբայրն էլ է իրա նման գող.
Իսկ թէ թշնամու արած գործ էր դա,
Նա եղբայրներին խօմ ոչինչ չէր տայ։

Դ.

Դեռ հին ժամանակ դրախտի երկրում
Աղատ էր... ինչպէս մեզ մօտ՝ վերջե-
րում,
Ու մարդիկ իրենց ցաւերի մասին...
Ժողովներ էին կազմում միասին։
Այսպէս՝ հօր դանձը թալանելուց յետ
Նրանք էլ ժողով արին իրար հետ,
Մի ժողով, որտեղ կսկիծը անհուն

Կապել էր նրանց բոլորի լեզուն։
Վերջը նրանցից մէկը լացկամած
Դարձաւ ցած ձայնով բոլորին ասաց.
«Եղբայրներ... սրտիցս արիւն է հո-
սում,
Ճգնում եմ, խեղդւում... լեղուս չի
խօսում.—
Զգիտեմ մեր ո՞ր մեղքերի համար
Աստուած մեզ պատժեց անողորմա-
բար,
Այսպիսի մի սև պատուհաս ղրկեց,
Մեզ մեր հարազատ հօր փառքից
զրկեց...
Փառք Տիրոջ... գուցէ նրան այսու-
հետ
Հաճելի չէ մեզ տեսնել իրար հետ,
Եւ այդ պատիժը գուցէ բաժանման
Նա ուղարկեց մեզ իբրև մի նշան...
Ծանր է, եղբայրներ, այդ կորստից
յետ
Զմխիթարւել գոնէ իրար հետ,
Բայց... լինի Տիրոջ կամքը երկնային,
Գուցէ մեզ ներւեն մեր մեղքերը հին։
Այսպէս նա խօսեց, ու բոլորն անձայն
Գլխի շարժումով համաձայնեցան,
Թէ արդար այդպէս,—Աստուած այ-
սուհետ
Չի ուզում ապրի եղբայրն եղբօր հետ...
Եւ իսկոյն Աստծու կամքին համաձայն

Եղբայրներն երկրից մասերն ստացան։
—«Պատժիր, Տէր»,— ասաւ Տիրոջ Քե-
ռովբէն։
—«Ներիմ», Տէրն ասաւ, գուցէ ըս-
խտափեան։

Երկրորդ երգ։

Ա

Եղբայրներն այդ մեծ ժողովից յետոյ
Տրտում դէմքերով ու սրտերով գոհ,
Մինչև իրանց հին մեղքը քաւէին,
Իրար արցունքով հրաժեշտ տուին.—
Ամեն մէկն ասաւ ձայնով.— «Ախ,
մի օր
Կգայ, երբ քաւած մեղքերըս բոլոր,
Մէկ էլ ձեզ տեսնեմ»... Իսկ անձայն,
մտքում,—
«Տեսնեմ լողալով ձեզ ծով արցուն-
քում»։
Ու բեռնաւորուած հաղար կեղծիքով,
Իրարուց գողցած արծաթ ու ոսկով,
Եղբայրներն իսկոյն ճանապարհ [ըն-
կան
Իրրև սահմաններն իրանց սեփական։
Գնացին նրանք, բարեպաշտ, հլու,
Նոր յանցանքով հին մեղքը քաւելու,
Այսպէս է եղել միշտ մեր աշխար-
հում,—

Մեղքն ուրիշ մի մեծ մեղքով է քաւ-
ւում։
Իսկ մեղքի համբէն չծւած էր շատ
վաղ,
Ամեն մի եղբայր որոշել էր նախ
Պսակւել օտար մի աղջկայ հետ.—
Մեծ մեղքի համար կին էր անհրաժեշտ։
Այդ հողը նոյնպէս պատրաստ էր վա-
ղուց,
Ամեն մի եղբայր դեռ նս տղայուց
Սիրել էր հեռու մի օտար աղջիկ,
Օտար՝ ուրեմն անհուն գեղեցիկ։
Ու դեռ շատ անգամ սիրոյ ժամերին,
Երբ գրկում հանդչող սիրահար փէրին
Թովիչ գգւանքով սիրան էր մխացրել,
Նրան թագուհու գահ էր խոստացել։
Այժմ թագուհու փառքով գրգռւած
Օտար աղջիկը կօգնէր անկասկած,
Որ հայրը՝ դարձած փեսին դաշնակից,
Երկիրն ազատէր օտարի ձեռքից։
Իսկ այնուհետև փառքը անխռով
Պիտի սաւառնէր արծւի թեւերով
Միշտ նրա գլխին, իբրև մի նշան
Նրա անսահման, անյաղթ զօրութեան։
Նա պիտի ապրէր զրախտում յաւէտ
Թագուհի դարձած սիրած կոյսի հետ,
Իսկ եղբայրները՝ խեղճ, ամօթահար,
Պիտի ազերսեն նրան չարաչար.—
«Եղբայր, մեր տէրը, մեր իշխանն ես
դու,

Մենք՝ քո հնազանդ ծառաներն հլու,
Քեզ ապաւինած գութ ենք ազերսում,
Խնայիր մեր կեանքն, ի սէր Աստ-
ծուն»...
Իսկ նա՝ ցրտութեամբ անսասան ա-
բոջ,
Դառնում է նրանց՝ ցոյց տալով
կնոջ.—
«Ահա ձեր հզօր մեծ իշխանուհին,
Նրան ուղղեցէք ձեր ազերսը սին»...

Բ.

Ամեն մի եղբայր բիւրաւոր անգամ
Երազել էր այդ գիւթող ապագան,
Բայց նրա շունչը քաղցր էր այնքան,
Որ որոճում էր դեռ բիւր մէկ անգամ,
Ու, նրանց անուշ հմայքին գերի,
Չէր տեսել, ինչպէս սահմանն հայ-
բենի
Անցած՝ հասել էր այն հրաշք-երկրին,
Որ պիտի կեանք տար այդ երազնե-
րին։
Իսկոյն լուր հասաւ սիրուած աղջկան.
«Ուրախչէքս տուր, եկաւ քո փեսան,
Եկաւ նոր փեսի անման տեսքով,
Բեռնները բարձած արծաթ ուսկով»..
Աղջիկն հերարձակ վազեց ընդառաջ,

Մոռացած թախիծ, արցունք ու հառաչ։
Ու շատ օր չանցած նրանք բախտաւոր
Հարսանիք արին եօթ գիշեր, եօթ օր։
Նոյն օրն, և դուցէ մի օր վաղ կամուշ,
Այդ հարսնիքի պէս սրտոտ ու անուշ
Երկրի հակադիր երեք այլ ծայրում
Ուրիշ մի երեք հարսնիք էր արւում...

Գ.

Երբ առջի երեք ամիսներն անցան,
Կարօտ սրտերը քիչ հանգստացան,
Աժեն մի եղբայր անոր մօտ եկաւ,
Ոտնարտ շարժումով առաջը չոքաւ
Ու ասեց հանդարտ.— «Հայր, թոյլ տուր խօսեմ»։
—«Խօսիր, իմ որդիս, ասաւլկը լսեմ.»
—«Հայր, ես այն ընտրեալ երկրում եմ ծնւած,
Որտեղ դրախտն է հաստատել Աստուած,
Նրա ջուրն անուշ, հովը բարեբեր,
Իսկ հողը Աստուած հէնց ինքն է օրհնել.—
Ինչ ծառ ու ծաղկունք, ինչ շունչ կենդանի,

Ասես, որ նրա գրկում կեանք չառնի։
Լեռները լիքն են ծաղկով ու ոսկով,
Ջրերը հարուստ ակնով ու ձկնով,
Իսկ կախարդական անտառներն ամպհով
Հոգիներ դիւթող հարսով ու որսով։
Էլանեակ գիշերին այնտեղ դաշտերում
Սոխակի երգով փերիքն են պարում,
Իսկ հոգեպարար մութ այգիներում
Ցերեկը մարդկանց սրտերն օրօրում։
Սեւ-սև ամպերը օրը կէսօրին,
Երամով կիտւած լերան կատարին,
Պատւի պէս երկար մութները կախած
Դիտում են կեանքի այդ խնջոյքն անլաց։
Մանուկ արեը, տապ ու բոցավառ,
Ճգնում է պատռել ամպերը մռայլ,
Որ իր նախշունիկ գլուխը հանի
Ու ինքն էլ ներքև մի ժպիկ անի...
Հապա դու նրա մի մուտքը տեսնես,-
Երկնած, ամօթխած նորահարսի պէս,
Կարծես ճգնում է երկինքն հրդեհել
Ու նոր բոցերով մութն յաղթահարել.
Իսկ երբ խաւարից յաղթւած, անդօր,
Մեռնում են նրա կայծերը բոսոր,
Թախծկոտ աչքերից արցունք է թափում,
Նա ծաղկի վրայ, վարդենու սրտում.
Էլ չեմ խօսում, հայր, Եդեմի մասին,

Որտեղ երկնային զօրքը միասին
Մարմնաւոր հօտի հետ միարանած
Օրհներգ են ուղղում առ բարձրեալն
Աստուած».

Դ.

«Բնութեան այդ վեհ օրհներգից անհաս
Լոկ ես եմ եղել միշտ զուրկ ու անմաս.
Խնդութիւնն ինձ միշտ թախիծ է բերել։
Երգը սրտիս մէջ չծնուած մեռել։
Իսչպէս հայրենի լեռան գագաթին
Սև-սև ամպերը մռայլ ու մթին,
Այդպէս խաւարը խոժոռ ու սրտում
Նիհրել է միշտ իմ անժպիտ սրտում։
Զգիտեմ իմ ո՞ր մեղքից սրգոդած
Մի սև պատիժ էր ինձ ուել Աստուած,
Մի պատիժ՝ երեք եղբօր պատկերով
Սրտերը լցրած օձի թոքերով։
Ա՛խ, նրանց շնչից ժանտ ու թունաւոր
Դեղնեցին սրտիս վարդերը բոլոր,
Մի ծաղիկ միայն մնաց իմ սրտում—
Սև աստելութեան ծաղիկն անխնդում։
Ժպտի, ցնծութեան, երգի ժամերին,
Երբ սէր էր շնչում աշխարհն ու փերին,
Սրտիս թունաւոր ծաղիկը սրտում

Մահին, անմահին նզովք էր կարդում։
Աստղի ժպտի մէջ, կոյսի աչքերում,
Մանկան լացի մէջ, սիրոյ երգ երում,
Ժպտի, կայծերի, ծաղկի քաօսում,
Միշտ նա էր նստած, միշտ նա էր խօսում։
Բոցով օղակած կարիճի նման,
Ինձ հալածում էր իմ ստուերն անգամ,
Ես իմ սեփական ճիչն էի ատում,
Սրտիս սև թոյնով ինքս ինձ խայթում,
Ցերեկն անարթուն, գիշերը անքուն,
Զար դեի նման, անընկեր, անբուն,
Դողդոջ, շնչասպառ մութ էի փնտռում
Ու սև խոհերով մթի մէջ ժպտում»...

Ե.

,,Բայց մի օր, հայր իմ, երբ ես խաւարում
Դարձեալ իմ մռայլ միտքն էի խորհում,
Մի անուշ քուն էր եկել իմ վրաս,
Ու քունը փոխելդարձել մի երազ.—
Ես նստած էի մի զալար այգում,
Ուր բոյրի, ժպտի զարունն էր ծաղկում։
Իրիկնամուտ էր. արևը յոգնած
Իջնում էր մութի աշխարհը կամաց։

Փրփուրն արևի թախծով զարդարած,
Կոհակներն աշխուժ հովին դեմ ա-
բած,
Իմ առաջ անուշ վտակն էր հոսում
Ու քրքջալով ծաղկի հետ խօսում։
Նրա ափերին սոխակն ու փերին,
Արձագանք տուած ծաղկին, փրփուրին,
Բոյրի, համբոյրի երգն էին հնչում,
Ընկերի գիրկը ընկորը կանչում։
Արևը պահուեց սարերի յետև
Ու աղջիկները, մութի պէս թեթև,
Սահուն քայլերով, մերկ ու հերարձակ,
Անցան խտացած սուերների տակ։
Ընկերը գտաւ ընկորը մթում,
Բոյրի, համբոյրի տագնապը սրտում,
Կարօտը մարեց կարօտ համբոյրով
Ու գիշերն անուշ շշնջաց սիրով։

Զ.

,,Բայց, ինչպէս մի ամպ լազուր երկնքում,
Այդպէս այդ մրմունջ գիշերի գրկում
Մի թախծկոտ կոյս էր մնացել անլուռ,
Որ լուռ գետափին հեծծում էր տխուր

Գիշերն անուշ
Երազ ու յուշ,
Սէր-քուն բերեց աշխարհին,

Նա՝ ինձ համար
Մենակ խորթ մայր,
Արցունք բերեց խոր ու հին։

Կուրծքս գարուն
Սև՝ ու արուն,
Քանի՞ անուշ քեզ կանչեմ,
Սիրտս աներազ,
Սէրս անմուրազ
Քանի՞ անուշ հառաչեմ։

Վարդ ու սէրից
Վառ յոյզերից
Բարձ եմ հիւսել քեզ համար,
Արի՞, արի՞,
Կուրծքս վառի,
Վառ գրկիս մէջ կարօտդ առ։

Արի՞ դարձած,
Արի՞, մոռցած
Սև հոգսերը աշխարհի,
Դիրկըս հնոց,
Կարօտս բոց,
Թող քեզ սիրով օրօրի։

Մազս թել-թել
Կրծքիս փռել,
Կուրծքս դարձել սև գիշեր,

Արի, համբույր
Ու մարմնի բույր,
Արի, քեզ տամ այս գիշեր։

Արի՜, անուշ,
Արի զգուշ,
Շատ եմ մաշուել քեզ համար,
Արի՜, արի՜
Սիրուս օրորի,
Կարօտ տուր ինձ, սէրըս առ։

Ժիր փրփուտիկ,
Անուշ քուրիկ,
Գնա, ասա իմ հարին,
Թէ անդարուն,
Սիրաը արուն,
Քեզ է մնում քո գերին...

Է.

«Աղջիկը լոեց տխուր հառաչով,
Ու մի փոքր անց անուշ շառաչով
Մի աշխոյժ ալիք ափին մօտեցաւ,
Փոփուռն ինձ թրջեց, ալիքը անցաւ...
Ախ, հայր իմ, ինչպէս մութ ներկնա-
յարկում
Հրգեհն՝ օրերով բորբոքած թաքուն,

Յանկարծ ներս ժայթքած խաղաղ
ննջարան,
Մի ակնթարթում լափում է նրան,
Այդ ալիքն այդպէս պատռեց իմ
հոգին,
Ու ժայթքեց այնտեղ հրդեհը ներ-
քին,—
Զգացի, որ նա իմ հարն է կարօտ,
Բարձրաց ոյ, ասի, գնամ նրա մօտ.
Բայց այդ բոպէին կայծակէց ուժգին
Մի ուժեղ որոտ պայթեց իմ գլխին,
Երկիրն օրօրուեց ու մաքիս արագ
Ես իջնում էի անդունդն անյատակ...
Ու այդ խելագար թռիչքիս մէջին
Երկու բազուկներ ինձ մեղմ գրկեցին,
Ճակատս այրեց մի քնքոյշ համբոյր
Ու սիրտս — աղջկայ կրծքի մի
թարմ բոյր...
Թոր եւ լազիս մէջ աչքս բաց արի,—
Ես գրկուած էի իմ կարօտ հարի,
Ու իմ ոտքերիս առաջ անկենդան
Երեք գիակ կար ինձ ծանօթ այն-
քան։
Խինդն ու սարսափը տիրեց իմ հա-
գուն,—
Այդ եղբայրներիս դիակն էր գժգոյն.
Եղբայրներ՝ միայն եղբօր պատկերով,
Սրտերը լցած օձի թոքերով։
«Մի վախիր,— ասեց հարս սրտագին,

Տիրոջ կամքն էր այդ, փառք Նրա
կամքին.—
Նրանք սիրասիրուկ քեզ մահ ցան-
կացան,
Ու սիրուդ ձեռքով հէնց՝ մահ ստացան։
Ես պիտի գրկեցի կուրծքը իմ հարի
Ու... խորունկ քնից աչքս բաց արի,—
Եալլա տեղ անկեանք բարձ էի
գրկել
Եղողող խաւարում մենակ,անընկեր»։

Ը.

«Երազս տեսայ ես լուսադէմին,
Երբ երկնքի բաց դռներով ալփին
Լոյս ու յայտնութիւն է բերում
մարդկանց,
Յայտնութիւնս լցրած երգը նրանց։
Յայտնութիւն էր դա, հայր իմ, երկ-
նային,
Թէ նեղուեցին ինձ իմ մեղքերը հին,
Ու ինձ ուղարկուած զորքերը պատժի
Սիրուս ձեռներով պիտի պատժի։
Ալձակուեց սրտիս պապանձուած լե-
ղուն
Ու խօսեց այնտեղ կարօտն երգուն,
Կարօտն իմ դարուն, իմ սիրած հարի,
Որ երգիս մէջ ասում էր-«արի»...
Ու եկայ նրան, — այն անմահական
Բոյրերով խնկուած չքնաղ սղջկան.
Նա ասեց ինձ, հայր, և սէրն Եղիսի,

Հրդեհը սրտի, և խունկը մարմնի։
Նրա գրկի մէջ, բուրմունքով հար-
բած,
Տոռացայ վրէժ և՛ ցաւ, և՛ Աստուած.—
Մի Աստուած միայն ունէի — Նրան,
Մի վրէժ —ծծել խանդը կոյս արեան։
Բայց ժամ ու օրերն անցան շարէշար,
Ինձ իմ երկիրն է յետ կանչում՝ թըշ-
ւառ,
Գէք է հայրենիքս ու սէրըս անրիծ
Ազատել այդ ժանտ, նեխուած ձեռնե-
րից։
Ազերսում եմ քեզ, հայր, որդիաբար,
Զթողնել Տիրոջ երգն անկատար.—
Տու՛ր ինձ անհրաժեշտ ուժ ու օգնու-
թիւն»...
— «Կտամ»,—հայրն ասեց խնդացած
որդուն։
Այդ օրն աշխարհի տարբեր ծայրե-
րում
Զորս շատ ելջանիկ սիրտ էր բաբա-
խում.—
Զորս փեսի՝ մի հուղ փրկելու համար
Զորս աներ զօրք էր տուել անհամար։

Երրորդ երգ

Ա.

Այն հարսանիք չէր դրախտի երկրում,
Այլ մահւան տագնապ ու իրարանցում.
Այն հովւի երգ չէր լեռներում լալիս,
Այլ հայրն էր կորած որդուն ձայն տալիս.
Տուն չէին քանդում նորը շինելու,
Այլ Նրան հիմքից խսպառ ջնջելու.
Այն սուրբ ծուխը չէր սիրոյ մեհեանի,
Հրդեհւող երկրի լոցն էր ծիրանի։
Մեռել էր ժպիտ, երգ, խինդ ու ծիծաղ,
Մահւան մանգաղն էր գործում աջ ու ձախ,
Հնձում ծեր ու կին, մարդ ու երեխայ,
Մանուկի ժպիտն և սէրն աղջկայ։
Արիւն էր հոսում գետերի նման,
Կեանքերը թափւում նետերի նման,
Ծուխ ու հնոցից, ամպերի պէս սև,
Դալկանում և՛ կեանք, և՛ շունչ, և՛ սերև։

Մարդն ու գազանը հարբած ու թըշուառ,
Յոշոտում էին, ըզկտում իրար.
Մոռացել էր սէր, աղօթք ու Աստուած,
Նզովքն էր դարձել աղօթքը մարդկանց...
Այդպէս երջանիկ չորս հերոս եղբայր,
Հայրենիք մտան զօրքով անհամար,
Զորսն էլ առանձին այլ-այլ մասերով,
Հայրենիք մտան հրով ու սրով։
Ի՞նչ շունչ—կենդանի, ի՞նչ շէն գիւղ տեսան,
Սրի, կրակի մատնեցին, անցան.
Ճիշն ու ծուխն հասաւ Աստծու աթոռին,
Աստուած սրտդողած նայեց աշխարհին...

Բ.

Նայեց աշխարհին, տեսաւ, ինչ տեսնի.—
Ճակատն ամպամած սիրաշող լուսնի,
Երկինքը խաւար, աստղերը տրտում,
Երկիրը աւեր, հրդեհը սրտում։
Տեսաւ դրախտը ծխի մէջ լորած,
Դողդոջ մանուկներ անմեղ մոլորած,
Մօր սրդեկորոյս լացն աղեկտուր,
Արիւնով ներկած խորան ու մատուռ։
Տեսաւ կարօտ հօր կուրծքը ներսահար,

Աղջկայ փակված աչքեր սիրահար.
Ծիծառ ու սոխակ անյեն, թեւթափ,
Ծաղիկներ ժժգոյն ու տերևաթափ։
Ամեն մի ծաղկի, ամեն թփի տակ
Տեսաւ դիակներ, տեսաւ հոգեարք.
Ու ագռաւների երամներ անվերջ
Անտէր ու անթաղ դիակների մէջ։
Նա տեսաւ սրտեր ժանտ ոչխարիմ,
Տեսաւ հայրերի կողոպտված շիրիմ,
Ողջ-մեռելների հեծեծանք ու կոծ,
Զքնաղ երկրի տեղ — մերկ գերեզ-
մանոց։
Ու ժանտան այդ սև խնջույքում ան-
փառ
Նա տեսաւ հարբած չորս ճուաղ եղ-
բայր.
Զարս ճիւաղ՝ արիան կրքի ճանիճում,
Փառքով օրօրւող սիրոյ մանիճում.
Նա տեսաւ նրանց հեշտանքը գեհ,
Պագշոտ շրթների համբոյրները սև,
Տեսաւ, հայրական կուրծքը փլփռեց,
Տեսաւ բոլորը ու յուզված լռեց..

Գ.

— «Կայծակներ թափեր այդ սև մա-
հիճում,
Տէր», Բերովբէն էր Տիրոջ ալաչում.
— «Թող ապրեն, ապրեն, Տէրն ա-
սաւ տրտում,
Տէրն յանցաւորին մահով չի պատ-
ժում,

Մահն յաւերժացման ասակն է մեղքի,
Մեղքի վայելումն առանց դժոխքի. —
Թող, կեանք սամ նրանց մահից ա-
մեհի,
Խաւար գերեզման, բայց առանց
մահի։
Ով սև յանցանքի դժոխքն է վառում,
Տէրն այնտեղ առաջ նրան է այրում,
Թող ապրեն նրանք ու վառեն անե-
քուն
Իրենց յանցանքի, մեղքի դժոխքում։
Թող ապրեն, անշարժ ստւերի նման,
Իրենց մութի մէջ անշրջ, անկենդան.
Թող ապրեն նրանք ու սողան անվերջ
Կեանքի ու ժանտան ստւերների մէջ։
Թող այդ արիւնոտ սիրոյ մանիճում
Սերունդներ աճեն՝ անսէր, յանդգնոյն,
Ու ապրեն նրանք, յաւիտեան արթուն,
Այդ սերունդների անարև սրտում։
Թող նրանց կեանքը, մահից անբա-
ժան,
Լինի միշտ տարտամ, լինի տարա-
ժամ,
Ու ապրեն, ինչպէս անէծքի մի յուշ,
Նրանք աշխարհում ժոռացած ու ուշ։
Իսկ այն երկիրը որ սուրբ Եգիմում
Աղօթքի հետ սև նզովք է ծնում,
Եգիմից զրկված, թող արաւեստ՝
Հոգիներ ծնի անաղ
Թող կենդանը այնտ

ՀՀ Ազգային գրադարան
NL0836094

1918
Ա 97
26

Մեռնի որջերում պաղանների մոտ,
Աէրն ու աղօթքը, շիրիմն հայրերի—
Թշնամուց կոխուած, թշնամուն գերի։
Ծնող-մայրերի սարսափն անյատակ
Ծնուող սերնդին թող լինի դայեակ,
Աւերակները — մանկան օրօրոց,
Երգ օրօրոցի — հեծկլտանքն ու կոծ։
Թող սերունդները մեռնեն դալկահար,
Վաթանից հեռու, վաթանից օտար,
Ու հէք մայրերի կարօտը արթուն
Դեռ մնայ մեռած ու անթաղ որդուն.
Թող»... «Դեռ, Աստուած», ասաւ Բե-
ռովքէն.
— «Քո Աստծու գութը մեռել է աշ-
դէն»,—
Հառաչից Աստուած երիսը դարձրեց
Դրախտի երկրից ու յուզուած լռեց։

Դ.

Այսպէս անիծեց Աստուած՝ ոխերիմ
Դրախտն աւերող չար եղբայրներին,
Որ մինչև այսօր, իրար դէմ կանգուն,
Կռուում են, կռուում, չեն յաղթանակում,
Անիծեց Աստուած, գութը մեռցրած,
Նաև ապագայ սերունդը նրանց,
Ու մինչև այսօր անէծքը Նրա
Ծանրացած է հայ սերնդի վրայ,